3. Պայմանագրի գինը և վարձատրությունը

3.1. Սույն պայմանագրի գինը կազմում է՝

- 120000+24000 /20% ԱԱՀ/=144000 / Մեկ հարյուր քառասունչորս հազար /
- 120000+24000 /20% ԱԱՀ/=144000 /Մեկ հարյուր քառասունչորս հազար/

Ընդամենը՝ **240000+48000/20% ԱԱՀ/=288000** /Երկու հարյուր ութսունչորս հազար/ ՀՀ դրամ

Պատվիրատուի կողմից Կատարողին պայմանագրային գինը վճարվում է սույն պայմանգրում նշված Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից 30 օրվա ընթացքում:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծում է ՀՀ-ում գործող օրենսդրության համաձայն:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրի հավելվածները դրա անբաժանելի մասն են:

6.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝	Կատարող՝
ՀՀ արդարադատության նախարարություն	**«Գազշին ՄՁ» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8	Գործ. Հասցեն՝ ք. Երևան Արին-Բերդի 5-նրբ. թիվ 1շ.
ՀՎՀՀ՝ 02506264	Հեռ. +374 10 471286
Հ/Հ՝ 900011018547	ՀՎՀՀ՝ 02229549
Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ՝ 2480101509490000
Աշխ. ղեկավարի ժ/պ՝ Զ. Մարգարյան	Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ
	Տնօրեն՝ Հ. Ասատրյան